



# COVID-19-ի դեմ պատվաստում. հաճախակի տրվող հարցեր

## ՊԱՏՎԱՍՏՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

### Ինչո՞ւ է կարևոր պատվաստվելը

COVID-19-ի դեմ պատվաստումը պաշտպանում է մարդկանց COVID-19-ի հետևանքով ծանր հիվանդանալուց և հիվանդանոցում հայտնվելուց կամ մահանալուց: Այն նաև նվազեցնում է COVID-19-ի պատճառով քրոնիկական հիվանդություն ունենալու (օրինակ՝ երկարատև COVID) և աշխատանքից ու դպրոցից բացակայելու վտանգը:

Բացի այդ, պատվաստումը նվազեցնում է COVID-19-ը ուրիշներին փոխանցելու վտանգը: Սա հատկապես օգտակար է՝ պաշտպանելու այն մարդկանց, որոնց համար [ծանր հիվանդանալու վտանգն ավելի մեծ է](#):

Խորհուրդ է տրվում, որ մարդիկ, ովքեր նախկինում վարակվել են COVID-19-ով, այնուամենայնիվ պատվաստվեն, որպեսզի ամրապնդեն իրենց անվարակուսակությունը և նվազեցնեն COVID-19-ի հետևանքով հիվանդանոցում հայտնվելու վտանգը:

### Որքա՞ն լավ են գործում պատվաստանյութերը

**COVID-19-ի դեմ պատվաստանյութերը շատ լավ են գործում COVID-19-ի հետևանքով ծանր հիվանդանալուց, հիվանդանոցում հայտնվելուց և մահից պաշտպանելու հարցում:** COVID-19-ի դեմ բոլոր դեղաչափերը [ժամանակին ստացած](#) անձանց համեմատ, չպատվաստված անձինք [ավելի հավանական է, որ կվարակվեն COVID-19-ով](#), է՛լ ավելի հավանական է, որ [COVID-19-ի հետևանքով կհայտնվեն հիվանդանոցում](#), և շատ ավելի հավանական է, որ [կմահանան COVID-19-ից](#):

Մասնագետները նկատում են, որ ժամանակի ընթացքում պաշտպանությունը թուլանում է, հատկապես որոշ մարդկանց մոտ, օրինակ՝ 65 տարեկան և ավելի բարձր տարիքի, ինչպես նաև թույլ իմունային համակարգ ունեցող: Թարմացված (երկվալենտ) աշխարհային խթանիչ դեղաչափերը կարող են օգնել վերականգնել այս պաշտպանվածությունը, որը ժամանակի ընթացքում նվազել էր, և ապահովել ավելի լայն պաշտպանվածություն նոր երնթատեսակներից: Սա է պատճառը, որ աշխարհային խթանիչներն առաջարկվում են 5 տարեկան և ավելի բարձր տարիքի բոլոր անձանց: (Տե՛ս [խթանիչ դեղաչափերը](#)՝ լրացուցիչ տեղեկությունների համար):

Գիտության և վիրուսի զարգացմանը զուգահեռ՝ պատվաստանյութերի վերաբերյալ առաջարկություններն ավելանում են: Գիտնականները և բժիշկ-փորձագետները շարունակում են ուշադիր հետևել տարբեր տարիքի և վտանգի տարբեր գործոններ ունեցող մարդկանց դիմադրողականության նվազման նշաններին: Նրանք նաև հետևում են, թե որքան լավ են պատվաստանյութերը պաշտպանում վիրուսի նոր ենթատեսակներից:

### Ո՞ր պատվաստանյութերն են հասանելի Միացյալ Նահանգներում

Միացյալ Նահանգներում հաստատված են կամ թույլտվություն ունեն COVID-19-ի դեմ չորս պատվաստանյութեր: Դրանք պատրաստվում են Pfizer-BioNTech-ի (ապրանքանիշի անունը՝ Comirnaty), Moderna-ի (ապրանքանիշի անունը՝ Spikevax), Novavax-ի և Janssen/Johnson & Johnson-ի կողմից: Pfizer և Moderna պատվաստանյութերը թույլատրված են 6 ամսական և ավելի բարձր տարիքի անձանց համար: Novavax պատվաստանյութերը թույլատրված են 12 տարեկան և ավելի բարձր տարիքի անձանց համար: Johnson & Johnson (J&J) պատվաստանյութերը թույլատրված են 18 տարեկան և ավելի բարձր տարիքի անձանց համար:

CDC-ն խորհուրդ է տալիս COVID-19-ի դեմ Pfizer, Moderna և Novavax պատվաստանյութերը J&J պատվաստանյութի փոխարեն: J&J պատվաստանյութը [կարող է օգտագործվել որոշ դեպքերում](#):

Ավելին իմանալու համար այցելեք CDC-ի՝ [ժամանակին ստացեք COVID-19-ի դեմ բոլոր պահանջվող դեղաչափերը, ներառյալ խթանիչները](#) կայքէջ:





### Որտեղի՞ց կարող եմ ստանալ լրացուցիչ տեղեկություններ



- Այս ՌՏՅ-ն կամ COVID-19-ի դեմ պատվաստման այլ թեմաների վերաբերյալ ՌՏՅ-ները տպելու կամ տեսնելու համար սկանավորեք QR ծածկագիրը կամ այցելեք [COVID-19 -ի դեմ պատվաստման ՌՏՅ-ները](#) կայքէջ:
- [VaccinateLACounty.com](#)` ներառյալ [COVID-19-ի դեմ պատվաստման ժամանակցույցը](#), որն աղյուսակներով ցույց է տալիս պատվաստման յուրաքանչյուր դեղաչափի ընդունման ժամանակը և տեղեկություններ է տալիս այն մասին, թե [հնչպես պատվաստվել:](#)
- CDC-ի՝ [COVID-19-ի դեմ պատվաստանյութեր](#) կայքէջ:
- Եթե հարցեր ունեք, խոսեք ձեր բժշկի հետ:

